Հաճախ տրվող հարցեր Ադրբեջանում ԿԽՄԿ-ի գրասենյակի փակման վերաբերյալ

14/08/2025 | GLOBAL VERSION

Կարմիր խաչի միջազգային կոմիտեն (ԿԽՄԿ) 1992 թվականից ի վեր ակտիվորեն գործել է Ադրբեջանում՝ արձագանքելով հակամարտությունից բխող մարդասիրական կարիքներին: Արդեն ավելի քան երեք տասնամյակ ԿԽՄԿ-ն տարածաշրջանում աջակցել է հակամարտությունից տուժած մարդկանց հրատապ և կենսական կարիքներին, տրամադրել է հոգեբանական աջակցություն տուժած համայնքներին, օգնել իշխանություններին պարզելու հակամարտության առնչությամբ անհայտ կորած անձանց ճակատագրերը, խթանել Միջազգային մարդասիրական իրավունքի կիրառումը և իրականացրել ծրագրեր՝ բարձրացնելու ականների վտանգների ու ապահով վարքագծի վերաբերյալ իրազեկվածությունը: Մենք նաև այցելել ենք հակամարտության առնչությամբ պահվող անձանց՝ վերահսկելու նրանց պահման պայմաններն ու նրանց նկատմամբ վերաբերմունքը, ինչպես նաև օգնելու պահպանել կապը իրենց ընտանիքների հետ: Մենք համագործակցել ենք Ադրբեջանի Կարմիր մահիկի ընկերության և Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիայի հետ՝ մեղմելու հակամարտությունից տուժած համայնքների առջև ծառացած դժվարությունները:

Ինչո՞ւ է ԿԽՄԿ-ն փակում Ադրբեջանում իր գրասենյակը

Համաձայն Ադրբեջանի Հանրապետության իշխանությունների որոշման՝ ԿԽՄԿ-ն 2025թ. սեպտեմբերին կդադարեցնի իր ֆիզիկական ներկայությունը երկրում: Միաժամանակ, ԿԽՄԿ-ն հավատարիմ է մնում Միջազգային մարդասիրական իրավունքի ներքո պաշտպանություն ունեցող անձանց աջակցությանը և ներկայումս շարունակում է երկխոսությունը Ադրբեջանի իշխանությունների հետ մեր ապագա գործունեության շուրջ: Մեր ներգրավվածությունն ու ֆիզիկական ներկայությունը որևէ երկրում մշտապես պայմանավորված է տեղի իշխանությունների համաձայնությամբ: Հաշվի առնելով, որ իշխանությունների հետ մեր երկխոսությունը գաղտնի և երկկողմանի բնույթ է կրում՝ չենք մեկնաբանի այս քննարկումների վերաբերյալ մանրամասները:

Ի՞նչ գործունեություն է իրականացրել ԿԽՄԿ-ն Ադրբեջանում

Ավելի քան 30 տարի ԿԽՄԿ-ն Ադրբեջանում մարդասիրական միջավայրի մաս է կազմել՝ արձագանքելով հակամարտությունից տուժած անձանց փոփոխվող կարիքներին՝ առաջնահերթությունը տալով մարդկային արժանապատվությանը և համայնքների երկարաժամկետ տոկունությանը:

Հենվելով իր մարդասիրական սկզբունքների՝ մարդասիրության, չեզոքության, անաչառության և անկախության, ինչպես նաև իր եզակի հանձնագրի վրա, որը սահմանվում է Ժնևի կոնվենցիաներով՝ ԿԽՄԿ-ն Ադրբեջանում մշտապես աշխատել է հակամարտությունից տուժած անձանց կարիքները հոգալու ուղղությամբ, այդ թվում՝ էսկալացիաների ժամանակ: ԿԽՄԿ-ի մարդասիրական գործունեությունը մշտապես հիմնվում է կարիքների համընդհանուր ըմբռնման և անմիջականորեն տուժած

համայնքների, իշխանությունների ու տեղի գործընկերների հետ ձևավորված հարաբերությունների վրա։

Քանի որ կազմակերպությունն ամփոփում է իր աշխատանքը Ադրբեջանում, այս տարիներին ձևավորված կապերը, համակարգերը և կուտակված փորձը շարունակելու են ազդել Ադրբեջանի իշխանությունների և Ադրբեջանի Կարմիր մահիկի ընկերության հետ մեր հետագա համագործակցության վրա։

1992 թվականից ի վեր ծավալված մեր գործունեության վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք ուսումնասիրել այս լուսանկարների շարքը և ամփոփ տվյալները (հասանելի է անգլերենով)։

Ի՞նչ է լինելու այն համայնքների հետ, որոնց աջակցել եք Ադրբեջանում

Մենք հասկանում ենք, որ մեր գրասենյակի փակումը կարող է անորոշության և մտահոգության առիթ հանդիսանալ այն ընտանիքների համար, որոնք իրենց պահվող հարազատների մասին լուր ստանալու հարցում ապավինում էին ԿԽՄԿ-ին։ Այս գործառույթը ստանձնել են Ադրբեջանի իշխանությունները և շարունակելու են ապահովել այս անձանց ու նրանց ընտանիքների միջև կապը։

ԿԽՄԿ-ն շարունակում է հավատարիմ մնալ Միջազգային մարդասիրական իրավունքով հովանավորվող անձանց աջակցությանը։ Մեր երկխոսությունը Ադրբեջանի իշխանությունների հետ շարունակվում է՝ համաձայն ԿԽՄԿ հանձնագրի և Ժնևի կոնվենցիաներով սահմանված պարտավորությունների։

Ադրբեջանում մյուս բոլոր գործողությունները, օրինակ՝ անհայտ կորած անձանց ընտանիքներին ցուցաբերվող աջակցությունը, փոխանցվել են ազգային իշխանություններին։ Ադրբեջանի Հանրապետության Գերիների, պատանդների և անհայտ կորած անձանց հարցերով զբաղվող հանձնաժողովը շարունակելու է իրականացնել մարդկային աճյունների որոնմանն ու նույնականացմանն ուղղված աշխատանքները։

Մենք աջակցում ենք Ադրբեջանի և Հայաստանի պետական հանձնաժողովների միջև համագործակցությանը և հույս հայտնում, որ նրանց համատեղ ջանքերը երկար սպասված պատասխաններ կտրամադրեն անհայտ կորած անձանց ընտանիքներին։ Որպես չեզոք միջնորդ, երկու կողմերի ցանկության դեպքում մենք պատրաստ ենք աջակցել նրանց միջև երկխոսությանը և գործողություններին։

Ինչպե՞ս կկարողանան Ադրբեջանում մարդիկ կապ հաստատել ԿԽՄԿ-ի հետ

ԿԽՄԿ-ի կողմից Ադրբեջանում իրականացված բոլոր գործողությունները կդադարեցվեն, իսկ մեր գրասենյակը կփակվի։ Նախկինում Ադրբեջանում իրականացված մեր բոլոր

աշխատանքները, օրինակ՝ անհայտ կորած անձանց ընտանիքներին ցուցաբերվող աջակցությունը, փոխանցվել են ազգային իշխանություններին։

Հավելյալ հարցերի դեպքում խնդրում ենք այցելել ԿԽՄԿ-ի «Հետադարձ կապ» կայքէջ և գրել մեզ։

Դեռևս այն ժամանակ, երբ ԿԽՄԿ-ն իր գործունեությունն էր իրականացնում Ադրբեջանում, ես դիմել էի օգնության՝ իմ անհայտ կորած հարազատին գտնելու համար։ Ի՞նչ զարգացում կունենա իմ դիմումն այսուհետ։

Մենք սերտորեն համագործակցել ենք Ադրբեջանի Հանրապետության Գերիների, պատանդների և անհայտ կորած անձանց հարցերով զբաղվող հանձնաժողովի հետ։ Անհայտ կորած անձանց վերաբերյալ հավաքագրված ամբողջ տեղեկատվությունն ընտանիքների համաձայնությամբ փոխանցվել է Հանձնաժողովին։ Վերջինս շարունակելու է իր գործունեությունը՝ ուղղված անհայտ կորած անձանց ճակատագրերը պարզելուն և ընտանիքներին պատասխաններ տրամադրելուն։ Լրացուցիչ տեղեկությունների դեպքում կարող եք անմիջապես դիմել Հանձնաժողովին։

Ադրբեջանից դուրս հակամարտությունների առնչությամբ անհայտ կորած անձանց դեպքերի համար խնդրում ենք կապ հաստատել Ադրբեջանի Կարմիր մահիկի ընկերության հետ։

Հնարավո՞ր է, արդյոք, որ ԿԽՄԿ-ն ապագայում վերականգնի իր գործունեությունն Ադրբեջանում։

Որպես չեզոք մարդասիրական կազմակերպություն, մենք միշտ պատրաստ ենք իրականացնել մեր հանձնագիրը։ ԿԽՄԿ-ի ներգրավվածությունն ու ֆիզիկական ներկայությունը յուրաքանչյուր երկրում պայմանավորված են տեղի իշխանությունների համաձայնությամբ։

Ի՞նչ կարգավիճակ ունեն հայ ազատազրկված անձինք Ադրբեջանում։ Արդյո՞ք նրանց այցելելը Ձեր հանձնագրի շրջանակներում չէ։

Մենք այցելել ենք հակամարտության առնչությամբ ազատազրկված բոլոր անձանց, որոնց մասին մեզ պաշտոնապես տեղեկացրել են Ադրբեջանի իշխանությունները։ ԿԽՄԿ-ն շարունակում է հանձնառու լինել Միջազգային մարդասիրական իրավունքով հովանավորվող անձանց՝ շարունակելով մեր հնարավոր հետագա գործունեության վերաբերյալ երկխոսությունը Ադրբեջանի իշխանությունների հետ։ Միևնույն ժամանակ, հարկ է ընդգծել, որ որևէ երկրում պահվող անձանց այցելելու մեր կարողությունը կախված է բացառապես տվյալ երկրի իշխանությունների համաձայնությունից։

ԿԽՄԿ-ն հրապարակավ կբացատրի՞, թե ինչու են Ադրբեջանի իշխանությունները որոշել դադարեցնել կազմակերպության գործունեությունը:

Մենք իրավասու չենք մեկնաբանելու Ադրբեջանի իշխանությունների կողմից ընդունված որոշումը:

Ինչպե՞ս եք շարունակելու Հայաստանում անհայտ կորած անձանց ընտանիքների հետ աշխատանքը՝ ուղղված նրանց հարազատների ճակատագրերի պարզաբանմանը:

Անհայտ կորած անձանց և նրանց ընտանիքներին առնչվող մեր գործունեությունը Հայաստանում շարունակվում է: Այժմ մեր «Սատարում» ծրագրի միջոցով աջակցություն ենք տրամադրում այն ընտանիքներին, որոնց հարազատները շարունակում են անհայտ կորած մնալ 2020–2023 թթ. հակամարտության սրացումների հետևանքով: Մենք աջակցում ենք պետական մարմիններին, մասնավորապես՝ Հայաստանի Գերիների, պատանդների և անհայտ կորած անձանց հարցերով զբաղվող միջգերատեսչական հանձնաժողովի աշխատանքային խմբին, ինչպես նաև դատաբժշկական ծառայություններին՝ նպաստելով տեղեկատվության արդյունավետ փոխանակմանը և մասնագիտական կարողությունների ամրապնդմանը:

Մենք աջակցում ենք Ադրբեջանի և Հայաստանի պետական հանձնաժողովների համագործակցությանը և հույս հայտնում, որ նրանց համատեղ ջանքերը երկար սպասված պատասխաններ կտրամադրեն անհայտ կորածների ընտանիքներին: Որպես չեզոք միջնորդ, երկու կողմերի ցանկության դեպքում մենք պատրաստ ենք օժանդակել սույն երկխոսությանը և գործողություններին:

Շարունակելու՞ եք հաղորդակցվել Ադրբեջանում պահվող անձանց ընտանիքների հետ

ԿԽՄԿ պատվիրակությունը Հայաստանում կշարունակի հաղորդակցվել պահվող անձանց հարազատների հետ՝ իր դռները բաց պահելով նրանց առաջ, որոնք կցանկանան այցելել կամ զրուցել մեզ հետ: Միևնույն ժամանակ, մենք շարունակում ենք Ադրբեջանի իշխանությունների հետ մեր երկխոսությունը՝ հակամարտության առնչությամբ ազատազրկված անձանց վերաբերյալ մեր հետագա գործունեության շուրջ: Զարգացումների դեպքում մենք այդ մասին կտեղեկացնենք ընտանիքներին:

Կպահպանի՞ ԿԽՄԿ-ն իր հարաբերությունները Ադրբեջանի Կարմիր մահիկի ընկերության հետ երկիրը լքելուց հետո

ԿԽՄԿ-ն և Ադրբեջանի Կարմիր մահիկի ընկերությունը Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ընկերությունների միջազգային շարժման անդամներ են: ԿԽՄԿ-ն հանձնառու է շարունակելու Ադրբեջանի Կարմիր մահիկի ընկերության հետ իր համագործակցությունը, որը ձևավորվել է տարիների համատեղ նվիրվածության և մարդասիրական գործունեության հիման վրա: